ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք , Մյասնիկյան 4 ,հեռ.0233 74 6-73

«02» դեկտեմբերի2019թ

ԹԻՎ 286

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ուղարկում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ղեկավարի 2019թվականի նոյեմբեր ամսի ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր <<4>> թերթ.

Համայնքի ղեկավար՝ Տ. Բաղդասարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

«4» նոյեմբերի 2019թվական N 83-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածով, 15-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ, 68-րդ հոդվածներով, «Տեղականի ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 1834-Ն որոշումը և Մյասնիկյան համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 14-ի N 74-Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերի աճուրդն անցկացնել Մյասնիկյան համայնքի համայնքապետարանում՝ 2019 թվականի դեկտեմբերի 10-ին, ժամը 10^{00}–ին.

1)Լոտ 1՝ 04-066-0223-0005կադաստրային ծածկագրի 8.3302հա գյուղատնտեսական այլ հողատեսք, մեկնարկային գինը՝ 563000ՀՀ դրամ ,

Լոտ 2՝ 04-066-0222-0002կադաստրային ծածկագրի 18.9703հա գյուղատնտեսական այլ հողատեսք, մեկնարկային գինը՝ 1281000ՀՀ դրամ,

Լոտ 3՝ 04-066-0226-0002 կադաստրային ծածկագրի 11.1873հա գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի վարելահող,մեկնարկային գինը՝ 4083500ՀՀ դրամ,

Լոտ 4՝ 04-066-0226-0001կադաստրային ծածկագրի 16.0457հա գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի վարելահող,մեկնարկային գինը՝ 5856700 ՀՀ դրամ,

Լոտ 5՝ 04-066-0221-0001 կադաստրային ծածկագրի 7.3152հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք,մեկնարկային գինը՝ 494000ՀՀ դրամ.

Լոտ 6՝ 04-066-0222-0001 կադաստրային ծածկագրի 2.0հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք,մեկնարկային գինը՝ 1350000ՀՀ դրամ.

Լոտ 7՝ 04-066-0222-0003 կադաստրային ծածկագրի 2.0հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք,մեկնարկային գինը՝ 1350000ՀՀ դրամ.

Լոտ 8՝ 04-066-0195-0044 կադաստրային ծածկագրի 0.2384հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք,մեկնարկային գինը՝ 16100 ՀՀ դրամ.

Լոտ 9՝ 04-066-0223-0006կադաստրային ծածկագրի 12.4486հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք,մեկնարկային գինը՝ 841000 ՀՀ դրամ.

2.Հողամասի օտարման նախավճարը և քայլի չափը հաստատել հողի մեկնարկային գնի 5%-ի չափով

3. *Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից*

Համայնքի ղեկավար՝ *Տ.Բաղդասարյան*

2019թվականի նոյեմբերի 4,
Համայնք Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք , Մյասնիկյան 4 ,հեռ.0233 74 6-73

«27» նոյեմբերի 2019թվականի N 84 -Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապեության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն և 2006թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում , չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով ԱՁ Արման Գևորգյանի կողմից 20.11.2019թվականի կազմած հողամասի , շենք-շինությունների հատակագծը և եզրակացությունը, ինչպես նաև Մյասնիկյան համայնքի բնակիչ՝ Արմեն Համլետի Առաքելյանի /ծնված՝ 13.07.1985թ/ դիմումը ինքնակամ կառուցված շենք-շինությունների օրինականացման մասին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Արմեն Համլետի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի Շահումյան փողոցի N 68 հասցեում գտնվող/կադաստրային ծածկագիր 04-066-0015-0034/ բնակավայրի նշանակության 0.1205հա տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված արտաքին մակերեսով 165.9քմ բնակելի տունը և 64.5 քմ շինությունները ճանաչել օրինական:

2.Ինքնակամ կառույցի օրինականացման վճարը կազմում է 141179(մեկ հարյուր քառասուն մեկ հազար հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամ, որից՝

ա) բնակելի տուն՝ 165.9x 10000x 0.069=114471 ՀՀ դրամ, նկուղ՝ 58.6 x 6000 x 0.069=24265ՀՀ դրամ, պարիսպ՝ 5.9 x 6000 x 0.069= 2443 ՀՀ դրամ

3.Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի միասնական ստորաբաժանման կողմից:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

2019թվականի նոյեմբերի 27,
Մյասնիկյան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք,Մյասնիկյան փող. 4շենք,
Հեռ. 0233-74-6-73 էլ.փոստ myasnikyan.armavir@mta.gov.am

«7» նոյեմբերի 2019թվականի N 29-Ա

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, 77-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով.

Կարգադրում եմ՝

1.Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2.Հանձնաժողովին՝ Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի համայնքապետարանում և ենթակա կազմակերպություններում 2019թվականի նոյեմբերի 7-ից մինչև նոյեմբերի 14-ը ներառյալ իրականացնել գույքի հաշվառման և գրանցման աշխատանքներ:
3. Ապահովել նյութական պատասխանատուների անմիջական մասնակցությունը գույքագրման աշխատանքներին:
4. Գույքի և ապրանքների փաստացի հաշվառումը ակտի տեսքով ներկայացնել ավագանու հաստատմանը:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

7. նոյեմբերի 2019թվական,
Հ. Մյասնիկյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի
ղեկավարի 2019թվականի նոյեմբերի 7-ի
N 29-Ա կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Գևորգ Գրիգորյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ղեկավարի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ

Անուշիկ Խաչատրյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքապետարանի աշխ. քարտուղար
Լաուրա Սմբատյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքապետարանի գլխավոր մասնագետ
Հայկ Բաղդասարյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքապետարանի առաջատար մասնագետ

Աշխ.մի քարտուղար՝ Ա.Խաչատրյան